ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Վահագն Դավթյանի պոեմները

Ուսուցչուհի՝ _____ Գևորգյան Սուսաննա
(անուն, ազգանուն, հայրանուն)

/«Գյումրու թիվ 11 դպրոց» ՊՈԱԿ/

«_____» _____ 2023թ.

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ Ա

Պատմության անդրադարձը Վահագն Դավթյանի պոեմներում--------6

ԳԼՈՒԽ Բ

Ազգային հոգեբանության ճանաչումը Վահագն Դավթյանի ասք-պոեմներում----------34

Եզրակացություն----------54

Օգտագործված գրականության ցանկ----------56

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը - Մերօրյա իրականության մեջ կարևոր է գրականագիտական վերլուծության ենթարկել պատմության ասքը Վահագն Դավթյանի պոեմներում, ներկայացնել հեղինակի արծարծած խնդիրների այժմեականությունն ու հրատապությունը:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը- Թեմային անդրադարձել են գրականագետներ Դ. Գասպարյանը, Ժ. Քալանթարյանը, Հ.Գալստյանը:

Հետազոտության նպատակը - Մեր նպատակն է արժևորել պատմության ասքը Վ.Դավթյանի պոեմներում և բանաստեղծի գրական ժառանգության համապատկերում՝ զուգահեռներ անցկացնելով պատմական թեմատիկան արծարծող հայ այլ բանաստեղծների ստեղծագործությունների հետ:

Հետազոտության խնդիրները .

- Պատմության ասքի քննաբանությունը բանաստեղծի պոեմներում՝ զուգահեռներ անցկացնելով այլ բանաստեղծների ստեղծագործությունների հետ:
- Մեծ եղեռնի վերհուշը Վահագն Դավթյանի պոեզիայում:
- Ներկայացնել Վահագն Դավթյանի պոեմների կենսունակ ավանդների ազդեցությունը արդի գրականության վրա:

Ուսումնասիրության մեթոդը - Թեման ուսումնասիրելիս կիրառել ենք գրականագիտական վերլուծության համադրական և համեմատական մեթոդները:

Կառուցվածքը - Մեր աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, կցված է օգտագործված գրականության ցանկը:

Առաջին գլխում («Պատմության անդրադարձը Վահագն Դավթյանի պոեմներում») ներկայացրել ենք «Հայաստան աշխարհ՝Արա Գեղեցիկ», «Թոնդրակեցիներ», «Մոմիկ», «Հիշատակարան անանուն գրչի», «…Բայց ծնվեցի», «Ռեքվիեմ» և «Կոմիտաս» պոեմների քննությունը, արծարծած խնդիրներն ու արդիական հզոր լիցքերը:

Երկրորդ գլխում (« Ազգային հոգեբանության ճանաչումը Վահագն Դավթյանի ասք-պոեմներում») ներկայացրել ենք «Ծուխ ծխանի», «Ասք սիրո և սրի», «Ճերմակ ձիավորը», «Ասք Մաշտոցի մասին», «Զվարթնոց», «Մանդու», «Գիշերային զրույց Նարեկացու հետ» և «Արարչություն» պոեմների ընդհանուր մտայնությունը:

Հայրենիքն ստեղծվում է դարերով, հազարամյակներով, սրբագործվում ժամանակի անընդմեջ հոլովույթում: Հայրենիքն ստեղծվում է այնպիսի հոգևոր գումարելիներից, որոնց թիվն անհամար է և սահմանը՝ անչափելի: Այդ գումարելիների մեջ ամենամեծերից մեկը թերևս պոեզիան է: Եվ ահա հող-հայրենիքի թեման էլ դառնում է Վ.Դավթյանի պոեզիայի առանցքային մոտիվներից մեկը: Բանաստեղծն ամենայն մանրամասներով գծում է այդ հող-հայրենիքի պատկերը, նրա վեհ ու առնական գեղեցկությունը, քարե քնքշությունը, տոթակեզ ու պղնձաջիղ լեռները, վիհերն ու անդունդները, ցամաքած ու ծարավ, ճաքճքած հողը: Հայրենիքը նրա պոեզիայում երևում է իր հակասական բնաշխարհով, պատմության արհավիրքներով, թանկ կորուստներով և էլ ավելի թանկ ձեռքբերումներով: Հայրենիքը ոչ միայն ժառանգում են, այլև ստեղծում են տքնանքով, զոհաբերությամբ, նվիրումով, և դրանից առավել թանկ է այն դառնում:

ԳԼՈՒԽ Ա

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ

Հողի, ծննդավայրի և հայրենիքի թեման հոգեհարազատ է յուրաքանչյուր բանաստեղծի, այդ թվում և Վահագն Դավթյանին: Հայրենասիրական քնարերգությունն սկզբից ևեթ եղել է Վ.Դավթյանի ստեղծագործության հիմնական լարը:Հայրենասիրության թեման մեր ժողովրդի ճակատագրի կողմից գրականությանը պարտադրված թեմա է: Այն վիթխարի գործ է կատարել Հայրենիքի և հայապահպանման դժվարին ուղիների, խոչ ու խութերի հաղթահարումով մեր հինավուրց քարավանը դեպի լույսն ու փրկության ափերը հանելու գործում: Սակայն այդ թեման Վ.Դավթյանի ստեղծագործության մեջ միշտ ուղղագիծ չի արտահայտվում: Բանաստեղծը փնտրում է տարբեր ժանրային, ոճական և այլ արտահայտչամիջոցներ՝ տարբեր կողմերից արծարծելու իրեն հուզող խնդիրները: Այդպիսի միջոցներից մեկն էլ պատմությունն է, որին անդրադարձը կրկին փնտրտուք է ակունքների ու արմատների, ազգային բնավորության ու վարքագծի:

Բազմակողմանի ու հարուստ նստվածքներ ունի Վ.Դավթյանի հայրենասիրական քնարը՝ հայրենի ծխանիի մեծարումից մինչև հայրենասիրության բարձրագույն ձևի՝ հերոսության փառաբանում, ազգային հիշատակներից մինչև ժամանակակից հայ մարդու միջազգայնական զգացմունքները, հեռվում թողած ծննդավայրի կարոտից մինչև նորագյուտ հայրենիքի պատմական երթի իմաստավորումը: Վ.Դավթյանի կապույտ առասպելների շղթայի մեջ մեծ տեղ ու կշիռ ունի հայրենի հողն իր սար ու ձորով, իր արևաթաթախ հովիտներով ու դեպի երկինք ձգվող բարդիներով, իր սերմնացաններով, հեթանոսական եղեգան փողով ու դարավոր ծխանիներով, իր տառապանքով ու լույսով: Այդ ամենի վառ արտահայտությունը «Հայերգություն» պոեմն է:

«Հայերգություն» (1976) պոեմը նախապես «Կապույտ գիրք» ժողովածուի մեջ տպագրվել է «Հայաստան աշխարհ՝ Արա Գեղեցիկ» վերնագրով: Փոխելով վերնագիրը՝ Վ.Դավթյանն այն դարձրել է իր պատմահայրենասիրական պոեմների նախերգը:Պեոմն իր բնույթով ներբող է, որի մեջ բանաստեղծն ի մի է բերել հայոց պատմության խորհրդանշաններ-նշխարները և ոգել Հայաստանի ասքը: Նրա

բնութագրած խորհրդանշան նշխարներն են Հայաստանի բնությունը, բանահյուսական նմուշները, պատմության առանձին դրվագները, առանձին բնակավայրեր, ազգային դյուցազներգությունն իր հերոսներով , ճարտարապետական կոթողները, Նարեկացին ու Ֆրիկը:

Պոեմի առաջին դրվագներում ներբողվում է Հայաստանի բնաշխարհը՝ «բիրտ խոովքների ու քնքշանքների անվերջանալի ալեբախության» մի բարբարոս տարերք, որը նախախնամության ինչ-որ անբացատրելի խորհրդով իմաստավորել է գոյության առեղծվածը: Երկնասույզ լեռներ, որոնց գագաթին լճակներ կան սուրբ, իբրև Աստծու բոբիկ ոտքերից կաթկթված ցողեր…, բիրտ ապառաժներ, ուր քարերն իրենց ամուր ձեռքերում բռնել են քնքուշ կակաչի բույրեր, տոթակեզ ժայռեր, որոնց խորշերում ապաստանել են մի կապույտ ծաղիկ, բարակ, բարակ մի աղբյուր, ձիգ լեռնապարեր, որոնց պարսի մեջ աստվածներն առասպելներ են հյուսել: Նույնքան անմեկնելի է նաև Հայաստան աշխարհի հոգևոր կերտվածքը.

Մագաղաթնե՛րդ….
Ու մինչև հիմա չեմ կարողանում
Վերծանել նրանց խորհուրդը խորին…[1]

Բնութագրումների մեջ կան շատ դիպուկ պատկերներ: Հայաստան ասելով՝ բանաստեղծը բացահայտում է Հայաստան աշխարհի էությունը.

Ես աչք եմ բացել ու քա՛ր եմ տեսել…
Քարը՝
Աստծո խիղճը քարացած,
Քարը, որ ծանր է, ինչպես չլացած
Ու սրտին կաթած մարդու արտասուք…
Քարերի բուք էր ու քարերի սուգ:[2]

---

[1] Դավթյան Վ., Երկեր, հատոր 2-րդ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 9:
[2] Նույն տեղում, էջ 7:

Հայաստան աշխարհը դառնում է խոսքի հիմնական առանցքը,որին հեղինակը դիմում և բնութագրում է թե՛ հռետորական դիմումի ձևով,թե՛ թվարկումների հաջորդականությամբ, թե՛պատկերի ներքին հակադարձությամբ.

Հայաստան աշխարհ,
Դու՝ խոնարհ աղոթք,
Բայց նաև՝ արծվի ահեղ կոնչյուն…
Դու վիհի անկում, գագաթի ներբող …[3]

Այս փառաբանական աղոթքը շարունակվում է այնքան, մինչև ստեղծվում է պոեմի գլխավոր «Հայաստան աշխարհ՝ Արա Գեղեցիկ» պատկեր-համեմատությունը.

Հայաստան աշխարհ՝ Արա Գեղեցիկ,
Հայաստան աշխարհ՝ հրեղեն դու սյուն:[4]

Վ.Դավթյանի՝ հայրենիքին նվիրված բանաստեղծություններն ու պոեմները, որքան էլ նույն թեմայի տարբերակներ, որ թվում են բազմիցս կրկնված, ունեն մի նոր կողմ, նոր նրբերանգ, որը ոչ թե փոխարինում է նախորդ ասածներին, այլ ավելացնում:Զարմանալին այն է, որ նման հարցադրում ունեցող բանաստեղծություններից ոչ մեկը չի կարելի փոխարինել մյուսով, այլ է , եթե գրողի բոլոր նուրբ դիտարկումներն ու խիտ պատկերներն ամփոփվեին ու խտանային մեկ բանաստեղծության մեջ, ինչպես ասենք, Ե.Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ն է: Հայրենիքը Վ.Դավթյանի պոեզիայում ներկայանում է նաև իր աշխարհագրությամբ (Համբերդի ձոր ու Զվարթնոց) և պատմությամբ, բնությամբ, ազգային զարդանախշով և պատմական հերոսների գործերով:

Վ.Դավթյանի համար հայրենիքը նյութ է և ոգի միաժամանակ, իրականություն է և տեսիլք, հուշ է, պատմություն և իրականություն: Կարելի է ասել, որ հայրենիքը մարդու անձնագիրն է, նրա ինքնությունը որոշող սկիզբը, առանց որի մարդն ընդհանրապես դեմք չունի, իսկ բանաստեղծն՝ անհատականություն: Քարը՝

[3] Նույն տեղում, էջ 9-10:
[4] Նույն տեղում, էջ 16:

Հայաստանի խորհրդանիշը, Վ.Դավթյանի պոեզիայում Հայաստանի ուժի, առնականության, հզորության խորհրդանիշն է: Վ.Դավթյանն առավել ինքնատիպ է այն դեպքում, երբ առնականությունը զուգորդում է բնանկարը մեղմացնող գույների ու երևույթների հետ.

Երկիր, պղնձի ճիչ,
Որձաքարի հառաչ,
Եվ խաչքարին խաչված
Գեղեցկության աղերս: [5]

Հայրենի երկրի բնապատկերը Վ.Դավթյանի պոեզիայում ունի բնորոշ առանձնահատկություններ: Եթե Համո Սահյանի բնաշխարհային անզուգական պատկերները միշտ ունեն մի թախծոտ մշուշ, ամպի ու տխրության թափանցիկ մի քող, որ նստած է նրա քարափների, ձորերի ու անտառների վրա, ապա Վ.Դավթյանի գեղարվեստական պատկերներում իշխում են արևն ու լույսը: Լույսն ու կապույտը հաճախ են զուգորդվում բանաստեղծի գեղագիտության մեջ: Կապույտի գունային խորհրդանիշն արտահայտում է հերոսի և նրան շրջապատող աշխարհի ներդաշնակությունը, նրա սպասումի և հույսի հոգեվիճակը:

1950-60-ական թվականների Հայաստանի զարթոնքը, վերակերտման ուժը, խաղաղասիրությունը և այլ հատկանիշներ գովերգում են մեր գրեթե բոլոր բանաստեղծները՝ Համո Սահյանն ու Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակն ու Վահագն Դավթյանը:

Սիլվա Կապուտիկյան

Իմ հա՛յ ժողովուրդ, ի՛մ բարձրանուն,
Ես սիրում եմ քեզ նրա՛ համար,
Որ դու խաժամուժ այս աշխարհում
Ազնի՛վ ես ապրել կյանքդ դժվար[6]:

Պարույր Սևակ

Հպարտ եմ ես նրա համար,

---

[5] Նույն տեղում, էջ 16:

[6] Կապուտիկյան Ս., Երկեր, հատոր 1-ին, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 67:

Որ փառահեղ՝ պատմությունդ,
Եվ անունդ այնքան հին է[7]:

Վահագն Դավթյան

Ես սիրում եմ քե՛զ, իմ հայ ժողովուրդ,
Քե՛զ , որ լեռներում այս բարձրիկ ու լուրթ
Ապրել ես դարեր , դարեր մաքառել
Ու քո օջախը միշտ վա՛ռ ես պահել[8]:

Նկատելի է մի բանաստեղծի ազդեցությունը մյուսի վրա: Բայց մենք գործ ունենք ժամանակի համար ընդհանրական դարձած մտածողության հետ, երբ ժողովրդի պատմությանը դեմ հանդիման կանգնած գրողները փորձում են բացատրել ու ներկայացնել նրա հարատևության առեղծվածը, գոյության փիլիսոփայությունն ու ժողովրդի հավաքական բնավորությունը: Դրանք դեռևս պատմական ուղու վերացական և ընդհանուր գծերով տրված գնահատականներ են, և հետո է, որ բանաստեղծներից յուրաքանչյուրի ստեղծագործության մեջ պետք է որոշակիանան, դառնան տեսանելի և կրեն հեղինակային ինքնատիպության կնիքը:

Անցյալի ոգին պահպանելու համար Վ.Դավթյանը քննական հայացքի տակ էր առնում Աստվածաշնչի Ղովտին: Ժխտելով Ղովտի առասպելը՝ Վ.Դավթյանն ասում էր, որ անհրաժեշտ է հետ նայել՝ չմոռանալու համար հայոց մեծագույն ողբերգությունը՝ Եղեռնը: Ուրեմն անցյալի մեջ պետք է որոնել ոչ թե արատն ու դրա արժանի պատիժը, այլ կյանքի արմատը: Վ. Դավթյանի ստեղծագործության մեջ պատմությունը գիտակցվում է ոչ միայն որպես բանաստեղծական ժառանգորդության նստվածք, այլև «ժողովրդի գոյության փիլիսոփայության» մեկնակետ: Այս տեսակետը ստեղծագործական իրացում է գտել «Թոնդրակեցիներ» և «Ծուխ ծխանի» պոեմներում:

Հայոց միջնադարին դիմելու Դավթյանի առաջին փորձը՝ 1961 թ. հրատարակած «Թոնդրակեցիներ» պատմադրամատիկական պոեմը, իրոք, բանաստեղծի ստեղծագործական կյանքում ազդարարեց արվեստի նոր մակարդակի սկիզբը: «Թոնդրակեցիներ» պոեմը թարմ մոտեցում էր պատմական նյութի

---

[7] Սևակ Պ., Երկերի ժողովածու, հատոր 1-ին, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1972,էջ 157:

[8] Դավթյան Վ., Երկեր, հատոր 1-ին, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 164:

գեղարվեստական յուրացման խնդրում: Այն փորձում էր արվեստի ճշմարիտ չափանիշներով գնահատել անցյալի տվյալ շրջափուլը, հասարակական-քաղաքական իրադրությունն ու ժողովրդի ազգային-հոգեբանական նկարագրի վրա որոշակի հետք թողած անձնավորությունների գործունեությունը:

1992 թ.-ին արդեն գրական ճանապարհի վերջում, Վ. Դավթյանը հրատարակել է «Համառոտ պատմություն հայոց» խորագիրը կրող մի գրքույկ: Բանաստեղծը խոստովանում է. «Գիտեմ, դժվար է լինելու գործս, ծնողներիս հուշերը, կարդացածս գրքերը, լսածս ահավոր փաստերը գալու են, խառնվելու են իրար, ու ես մերկ մանկան նման մոլորվելու եմ մացառների, փշերի, այրող եղինջների, անապատային ավազների ալիքների մեջ»[9]:

«Ռեքվիեմ» (1977) պոեմը դարձյալ հայ ժողովրդի՝ 1915 թվականի ողբերգությունն է խտացնում: Այն գրելուց առաջ բանաստեղծը զբոսաշրջիկների մի փոքրիկ խմբի հետ ինքնաթիռով անցել էր Արևմտյան Հայաստանի վրայով, մեկնել Սիրիա և այդ ճամփորդության ընթացքում գնացել Դեր–Զորի անապատը՝ իր ժողովրդի այդ «անծայրածիր գերեզմանոցը»:Մտքերի ու տեսիլքների մեջ բանաստեղծը վերապրել է եղեռնի պատկերները, նորից տեսել Եփրատը: Ապրումներ, հիշողություններ, լուռ մենախոսություն, ինչից էլ ստեղծվում է այս սգերգ-ողբերգը: Կյանքում առաջին անգամ բանաստեղծն զգում է Երկրի ձգողական ահավոր ուժը: Վարը երևացող մշուշն իրեն ներկայանում է իբրև մի հսկայական զոհասեղանի ծուխ: Նա երկնքից գտնում է իր կորած երկիրը, այդ երկրում՝ Տավրոսի լեռնապարն ու Եփրատը, որ դառնում են պոեմի գլխավոր հերոսները: Ծննդավայրը, որ Դավթյանի այլ գործերում եղեռնի թեմայի ելակետն է ու նպատակը, այստեղ հիշատակվում է միայն մեկ անգամ՝ մատնելով եղեռնական նյութի կենսագրական նախասկիզբը.

Ո՞րն ես, Արաբկիր, իմ ծննդավայր,
Իմ արյան մորմոք, իմ արյան կարոտ…[10]:

---

[9] Դավթյան Վ., Անխորագիր, Զանգակ – 97 հրատարակչություն, Ե., 2003, էջ 50:
[10] Նույն տեղում, էջ 363:

ԳԼՈՒԽ Բ

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՍՔ-ՊՈԵՄՆԵՐՈՒՄ

Գոյության գաղտնիքի ըմբռնումը, ազգային հոգեբանության ինչ-ինչ կողմերի ճանաչումն առաջնային են մնում նաև Վահագն Դավթյանի «Ծուխ ծխանի», «Ասք սիրո և սրի», «Ճերմակ ձիավոր», «Զվարթնոց» ասք-պոեմներում: Սուրեն Աղաբաբյանը նշում է, որ այս գործերն իրենց ժանրային բնույթով արդեն զուտ պոեմներ չեն: Դրանք «չունեն սյուժետային ճյուղավորումներ ու տարածումներ. մի դեպքի ու հոգեկան դրության սահմաններում բանաստեղծն արտահայտում է իրեն զբաղեցնող ասքային գաղափարը»: Զևի առումով այդ գործերը թարմություն են մեր նորագույն պոեզիայում: Բուն իմաստի տեսակետից Դավթյանի պոեմները փորձում են ուղղակիորեն աղերսվել տերյանական-չարենցյան հազարերանգ հարցադրումներին. որտեղի՞ց ենք գալիս, ու՞ր ենք գնում: Այս հարցադրումները Վ. Դավթյանը լրացնում է նոր հանգույցով՝ ինչպիսի՞ն ենք մենք[11]: Վ.Դավթյանի հետագա շրջանի պատմական պոեմներն ու ասքերն ստանում են փոքր-ինչ այլ ենթատեքստ: Նա ստեղծագործության նյութ դարձրեց հնագույն առասպելները՝ Արշակի ու Փառանձեմի, Արտավազդի ու Կլեոպատրայի, Մուշեղ Մամիկոնյանի ու այլոց մասին: Հիմք դնելով ասքի ժանրին՝ բանաստեղծը դրանով իսկ նորություն բերեց գրականության ասպարեզում: Ասքերի հիմքում որպես կանոն ընկած են առասպելական զրույցը կամ առասպելը, իսկ եթե պատմական փաստ է, ապա այն հետագա դարերին է հասել լեգենդային շղարշով պարուրված: «Ծուխ ծխանին» հայրենիքի կարոտի առաջին կանչն է, որ հետո դարեդար պիտի հնչեր պատմության վրա.

Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւաւտն Նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվարգելն եղջերուաց,
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք…[12]:

---

[11]Աղաբաբյան Ս., Ծուխ ծխանի, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1970, №3, էջ 134:
[12] Դավթյան Վ., Երկեր, հատոր 2-րդ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985,էջ 32:

Անտոնիոսը Արտավազդին խարդավանքով գերեվարում և ընծա է տանում իր հոմանուհուն՝ Եգիպտոսի տիրոջն ու բոլոր արքաների տիրուհուն, գեղեցիկ ու նենգ, ցանկասեր ու դաժան և հավիտենական կին Կլեոպատրային: Բացառիկ հանդիսավոր օրհներգային-ծիսական մուտքով մի երգասան սկսում է Կլեոպատրայի գովքը, ինչն աննկատ ձևով ուժ է տալիս նրան և ինքնահիացումը դարձնում բացարձակ: Մունետիկը նույն հանդիսավորությամբ հայտնում է, որ Հայաստանը պարտված է, հայոց Արտավազդ արքան՝ շղթայված, որը պետք է գլուխ խոնարհի Կլեոպատրա արեգակի առաջ: Սակայն հպարտ ու գեղեցիկ է Արտավազդ արքան անգամ գերության ոսկե շղթաների մեջ: Նա Կլեոպատրայի առջևով,ի հեճուկս Անտոնիոսի, որին ինքը ապաստան էր տվել իր երկրում, անցնում է հպարտ ինքնասիրությամբ՝առանց խոնարհվելու և ծնկի գալու: Նրա առինքնող պահվածքը գերում է Կլեոպատրային, որը գիշերով իր դուռն ու գիրկն է բացում նրա առաջ և ասում. «Սրտիդ ուզածը պահանջի՛ր»: Հայոց արքան քաջ գիտենալով, որ Կլեոպատրան իրեն գիշերն իր գրկում պահելուց հետո առավոտյան կգլխատի՝ ասում է.

Կլեոպատրա, գեղեցկությունդ մարմնավոր
Բազմապատկիր քո հոգևոր գեղեցկությամբ
Եվ տու՛ր ինձ ծուխն իմ ծխանի…[13]

Մերկ ու տարփալի, անկրկնելի ու մատչելի Կլեոպատրայի գեղեցկության դիմաց հայոց արքան մնում է անհողդողդ: Բանաստեղծն ստեղծել է գերության մեջ հերոսական, հպարտ հայրենասերի կերպար՝ դրանով իսկ վեհացնելով նրան: Ելնելով ժողովրդական հոգեբանության ճշմարիտ ակունքներից՝ Վ.Դավթյանն Արտավազդ թագավորի նկարագրին հավելում է ժողովրդական ոգու առավել բարձր հատկություններից մեկը՝ մարդկայնությունը, որն այս անգամ ձևակերպվում է՝ «Մենք սովորություն չունենք զարկել զարկված մարդուն»: Մյուս կողմից առկա է գեղարվեստական լուծման կոնկրետ հիմքը: Արտավազդի՝ որպես թագավոր մարդու, ներաշխարհը թափանցելու բանաստեղծի ազատ իրավունքը թույլ է տալիս Վ. Դավթյանին հոգեբանական ամուր կռվաններով հաստատելու «ընկածին չզարկելու»

[13] Նույն տեղում, էջ 29:

բարոյականության արժեքը, աստվածաշնչյան բարոյական նկարագրի կարևորությունը: Այստեղ ևս, ինչպես և «Թոնդրակեցիներ»-ում, հաղթանակը չի չափվում արդյունքի շոշափելիությամբ: Բանաստեղծը ընթերցողին համոզում է, որ Արտավազդի բարոյական վիթխարի ուժն սկիզբ է առել հայրենի եզերքից, հայրենասիրական մեծ ու իրական զգացումից:

Քայլում է նա, ասես դրոշմվում է հողին
Կշիռը իր անձի … Քայլում է նա դանդաղ,
Աչքերի դեմ հեռու, կապույտ մի ծուխ,
Որ ծփում է թեթև, երակ-երակ
Ու ձգվում է դեպի ոլորտն անամպ,
Ուր տեսիլքի նման Արարատն է ցոլում … [14]

Տարբեր առիթներով Վ. Դավթյանը խոսել է իր երկերի գրական ակունքների, աղերսների ,ավանդույթի և նորարարության մասին: Հաճախակի մատնացույց է արել Գողթան երգերը, միջնադարյան տաղերգությունը, նաև այլ ակունքներ: Վ. Դավթյանի ձեռքբերումների հաջողություններից է ժողովրդական բանահյուսության անսպառ հարստությունների՝ բացառիկ ճաշակով ու վարպետ օգտագործումը: Խոսքը միայն բանարվեստի նյութերի մշակմանը չի վերաբերում կամ վերջիններիս ոճական առանձնահատկությունների կիրառմանը: Վ.Դավթյանն այնպես է յուրացրել բանահյուսության պոետիկան ու այնպես սուզվել ժողովրդական մտածողության մեջ, որ դրանց դրսևորումը ընկալվում է իբրև բանաստեղծի ներքին էության բացահայտում: Դրա վկայությունն է «Ասք սիրո և սրի» պոեմը: Այս պոեմը գողթան երգերի՝ մեզ հասած փշրանքների շնչով ու ուժով կերտված ստեղծագործություն է: Վիպերգերից ու էպոսի որոշ տարբերակներից եկող գործողությունների հարստությամբ, կրկնություններով ու հիպերբոլիկ պատկերներով «Վահագնի ծնունդի», Արտաշեսի վեպի, նավասարդյան առավոտի ու անաղարտ վիճակում մեզ հասած այլ հատվածների լեզվառճական հնարանքների տաղանդավոր օգտագործմամբ, պատկերվող ժամանակաշրջանի կենցաղի, սովորույթների ու հոգեբանության հարազատ ընկալմամբ, նյութին համապատասխան մե՛ր հանդարտ

[14] Նույն տեղում, էջ 23:

ու մեղմասահ, մե՛ր պոռթկուն ու դրամատիկ պատումով Վ.Դավթյանն ստեղծել է չափածոյի լավագույն գործերից մեկը: Ընթերցողի աչքի առջև հառնում է գրեթե երկհազարամյա վաղեմություն ունեցող մի պատմություն, ուր ամեն ինչ՝ հերոսներն ու նրանց արարքները, կենցաղն ու սովորությունները, հոգեբանությունն ու մտածողությունը, պատմելաձևն ու հյուսվածքը հարազատ են դարի ոգուն ու ժամանակին: Ոչ մի անհարազատ հնչյուն, ոչ մի խորթ երանգ:

«Ասք սիրո և սրի» (1965) բանքի մեջ երեք գուսան վիպում են Արշակ թագավորի վեպը, Փավստոսի պատմության այն հանգույցը, որ վերաբերվում է Արշակ Երկրորդին, Փառանձեմին, Գնելին և Տիրիթին: Պատանի գուսանը գովերգում է Փառանձեմին ու Գնելին, փառաբանում նրանց սերը: Փառանձեմի գեղեցկությունը կերտված է որպես քանդակ:

Իր գրական ակունքներից մեկն էլ Դավթյանը համարում էր հայոց լեզուն: Հայոց հարատևության առեղծվածը նա բացատրում էր հայոց լեզվով: Վահագն Դավթյանը, ինչպես Պ.Սևակը՝ «…Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմում, Մաշտոցի գյուտը գնահատում է իբրև ժողովրդի կյանքի ամենածանր պայմաններում իրագործած սխրանք. «Ապրելու համար մեզ զարմանալի մի սխրանք էր պետք»: «Ասք Մաշտոցի մասին» պոեմն այդ սխրանքի փառաբանումն է՝ որպես լեզվի փոխարկված ազգային ինքնուրույնություն:

Հրաշքը և սխրանքը կերպավորվում են նարեկացիական ոճի բնութագրումներով և թվարկումներով.

Ապրելու համար մեզ զարմանալի մի հրաշք էր պետք,
Հրաշք, որ դառնար լեռներին հենված բյուրեղյա գմբեթ,
Հողմի դեմ՝ սոսյաց անտառ մի դալար,
Ոգու աղեղին՝ պնդաջիղ մի լար…[15]:

Մաշտոցի կերպարն ուրվագծվում է ժամանակի և ընդհանրապես հայոց պատմության ամբողջ համապատկերին: «Ով սքանչելի լույսի վարդապետ, Ով դու տառապած բանի ուխտավոր», նաև «Ով տառապաքայլ ուխտավոր բանի»…: Այս

[15] Դավթյան Վ., Երկեր, հատոր 2-րդ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985,էջ 48:

խոսքերով է հեղինակը դիմում Մաշտոցին: Մաշտոցի կերպարը դառնում է նաև հայոց լեզվի փառաբանության առիթ: Գիր ստեղծողը գրավոր կյանք ու հավերժություն է տալիս լեզվին.

Ապրեց մեր լեզուն,
Շողաց, հուրհրաց նա բոցի նման,
Ու երբ շուրջբոլորը մռայլը մութի շատ էր խտանում,
Բոցն այդ առավել բորբոք էր դառնում . . .[16]:

Հայոց պատմությունը յուրովի դառնում է հայոց լեզվի պատմություն, գիրը, որը ոգի է, անդրադարձնում է հայոց փառքը, և նրա մեջ է ժողովուրդը տեսնում իրեն՝ որպես պատմություն, երգ, տաղ ու շարական: Այբ, Բեն, Գիմ-ը դառնում է մեր գոյության օրհներգը և հնչում պատմության բոլոր քառուղիներում, հնչում մեր բոլոր մեծերի շուրթերից: Սա նվիրում է, որ դառնում է յուրաքանչյուրի և անգամ այն գաղթական մամիկ-պապիկների կյանքի նպատակը, որ Դեր-Զորի անապատներում հայ ժողովրդի ողբից չորացած ավազի վրա որբացած թոռներին հայոց տառերն էին սովորեցնում: Որտեղ լեզուն ապրեց, ժողովուրդն ապրեց, որտեղ ժողովուրդը լեզուն կորցրեց, ինքը կորավ:

Գիրը՝ որպես ազգային Գոյի ճանապարհ. սա է Վ.Դավթյանի պոեմի գաղափարը:

Ազգային գոյության հայտնությունը շարունակվում է «Զվարթնոց»-ում: Գրի, երգի ոգեղեն սխրանքին գալիս է ավելանալու ժողովրդի կառուցողական հանճարի ուժը: Քարից Զվարթնոց կերտող միտքն իր հերթին ձև ու կերպարանք է տալիս ազգային բանին: Ի տարբերություն մյուս ասք-պոեմների՝ այն գրեթե պատմական որևէ փաստի վրա չի հենված: «Զվարթնոց»-ի սյուժետային գիծն ամբողջովին մտացածին է: Պատումը միագիծ չէ: Ուրվագծվում են հայոց շեները, շինականը աղոթք է հղում ծագող արեգակին.

-Լո՛ւյս, առաջին ընծա,

[16] Նույն տեղում, էջ 51:

Լո՛ւյս, հիասքանչ դու գանձ,
Լո՛ւյս, քեզ բարև ու փառք,
Փառք քեզ, Վահե, Վահե …[17]:

Պոեմի կենտրոնում ճարտարապետ Հովնանի կերպարն է: Նա վայելում է ստեղծագործ մտքի երջանկությունը, որին հաջորդում է տաճարի շինարարության նկարագրությունը: Դա ուղեկցվում է ժողովրդական տոների, Վարդավառի նկարագրությամբ, սիրո հանկարծակի բռնկումով: Ընդհանրապես, առանց սիրո զուգահեռի Վ. Դավթյանը գործ չի ստեղծում: Տաճարն ավարտվում է և օծվում: Հնչում է հայոց պատարագը: Հնչում է որպես ոգու ծուխ, տեղում որպես տաք անձրև, շարունակվում որպես լույսի ծավալում, շողի թավալում, ոգու խորհուրդ, «բարձրագույն աղերս», որպես լույսի մրրիկ ու ծես, լույսի սաստկացում, ճառագայթման փառք, ոգու մրրիկ, ալեկոծված կապույտ», «որ ոլորվում վսեմ սյուներն ի վեր Ու դողում է կամար գմբեթի տակ…»: Բյուզանդիայի Կոստանդինոս ինքնակալը պատիվ է համարում մասնակցել Զվարթնոցի բացմանը, հիանում է նրանով և հանճարամիտ Հովնանին հրավիրում իր քաղաքը՝ սուրբ Կոստանդնուպոլիսը: Ճանապարհ է ընկնում Հովնանը, սակայն հիշողությունները խեղդում են նրան, Մասիսն ու Վարդավառի աղջիկը կանչում են նրան: Ճանապարհը փակվում է նրա առջև, բուքը խեղդում է նրան, հողմը վայում նրա վրա… Հովնանը չպետք է գնար…

Առաքինությունն ու հպարտությունը, որով բնութագրվել են մեր նախնիները՝ Արա Գեղեցիկն ու Արտավազդը, Վասակ Մամիկոնյանն ու նրա որդի Մուշեղը, Վարդան զորավարն ու երանելի Մաշտոցը, դառնում են երկրի հպարտության ցուցանիշ:

Բարոյական բարձր գաղափարի յուրատիպ արտահայտություն է նաև «Ճերմակ ձիավոր»-ը (1966): Այս ասքում Մուշեղ Մամիկոնյանը, ի տարբերություն Շապուհի գործած բազմաթիվ ստորությունների, այդ թվում հայոց Փառանձեմ թագուհու անարգված պատվի, վրեժի դիմաց, առանց բարոյազրկման փորձի, պարտված ու պատերազմի դաշտից փախած պարսից արքային է ուղարկում նրա գերեվարված

[17] Նույն տեղում, էջ 73:

կանանոցը: Մուշեղի որոշումը դժգոհություն է առաջացնում զորքի մեջ, որը ցանկանում էր լուծել Փառանձեմ թագուհու վրեժը, սակայն Մուշեղի որոշումը մնում է անփոփոխ. «Ո՛չ…Շապուհի դեմ եմ ես պատերազմում և ոչ իր կանանց»[18]:

Մուշեղ Մամիկոնյանի արարքում Վ. Դավթյանը փորձում է ցույց տալ մեր ոգեղեն կերտվածքի մի նոր խորհուրդը: Նա մտքի կորով է հայտաբերում՝ վերանալու մանր վրիժառությունից: Իմաստավորելով սեփական արարքը՝ Մուշեղ Մամիկոնյանը հասնում է բարոյական յուրատեսակ հաղթանակի, և անկարևոր պլան է մղվում ռազմական հաղթանակը: Վ. Դավթյանը հայոց սպարապետի արարքում տեսնում է մի «աներևույթ ուժի» առկայություն.

Եվ խոսք են խոսում, թե ետ այնօրիկ
Մեղմացավ բարքը գազան Շապուհի,
Ու մի սակավիկ
Շատացավ բարին աշխարհի վրա[19]:

Այսպես Վ.Դավթյանը հաստատում է նաև բարության իր ըմբռնումը:

«Մանդու» դրամատիկական պոեմի հիմքը Մ.Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված առասպելներն ու նրա ավանդած տեղեկություններն են: Պոեմում ներկայացված է Արտաշես Առաջինի իշխանության շրջանը: Հաղթական պատերազմներից հետո նա միավորել է հայոց աշխարհը, թեև Փոքր Հայքը և Ծոփքը ինքնուրույն թագավորության վիճակում են: Արտաշեսը արքայական պալատում խրախճանքով նշում է իր հաղթանակը: Խրախճանքի ժամանակ թագավորը մեծ պատիվ է անում Արգավանին՝ նրան շնորհելով թագավորից հետո երկրորդ մարդու իրավունքները՝ տալով նրան Նախիջևանը: Արգավանին նախանձում է Արտաշեսի Արտավազդ որդին, որը պոեմում սկզբից ևեթ ներկայացվում է բացասական գծերով: Նա սկսում է դավեր լարել Արգավանի դեմ: Արտավազդի աչքը Նախիջևանի վրա էր, և նա առհասարակ վիրավորված էր Արգամին տված պատիվներից ու նրա մեջ գահի ապագա հակառակորդին էր տեսնում: Թագուհին ալանաց դուստր Սաթենիկն է, որի աչքի առջև արքան տարվում ու գերվում է վարձակ Մանդուի հրապույրներով:

[18] Նույն տեղում, էջ 71:
[19] Նույն տեղում, էջ 71:

Մանդուն սկյութուհի է, Արգավանի հարճը, խնդրել է իր տիրոջը, որպեսզի մասնակցի արքայական խնջույքին: Մանդուն, ըստ էության, Նազենիկի կրկնորդն է: Արքայի հրամանով գուսանները փառաբանում են չքնաղ վարձակին: Այդ ընթացքում հայոց թագուհին ու հայոց մեծ իշխանը՝ Արգավանը, դատողություններ են անում սիրո մասին: Արտաշեսը, ըստ Սաթենիկի, հողմածեծ ժայռ է. «Սիրո ծիլը քնքուշ ինչպե՞ս պիտի ելնի այս բիրտ ապառաժից», - հարցնում է նա: «Ծիլը ապառաժից հույժ դժվար է ելնում, բայց ելնելիս այդ նուրբ այդ բարալիկ ծիլը ապառաժ է ճեղքում»[20],- պատասխանում է Արգավանը: Տեսնելով արքայի համակրանքը Մանդուի հանդեպ և նրանց առանձնացումը՝ Սաթենիկն ասում է. «Տեսնում եմ, Արգավա՛ն, դու ճշմարիտ էիր, ապառաժը կարծես արդեն ճաք է տալիս»[21]: Գործողություններն ընդհատվում են «Երկնային» դրվագներով: Վահագնը, Տիրը և Աստղիկը խոսում են հայոց արքայի հոգեկան ապրումների մասին: Հաջորդ տեսարանը նորից արքայական պալատն է: Մայր ու որդի՝ Սաթենիկն ու Արտավազդը քննարկում են անցած օրվա խնջույքն ու արքայի վարքը: Սաթենիկը վիրավորված է, որովհետև «ապերախտ» արքան վարձակին իր ննջարանն է տարել: Արտաշեսի գալուց հետո ընտանեկան հարաբերությունները սրվում են: Աստիճանաբար հասունացվում է Արտավազդի չարի ծնունդ լինելու գաղափարը: «Դև ես, վիշապ ես դու», - ասում է հայրը որդուն: Այնուհետև պարզվում է, որ նախորդ օրը Արտավազդն անպատվելով պալատից հեռացրել է Արգավանին և ծեծելով կուրացրել Արցախյան նժույգին: Սաթենիկն Արտաշեսին հիշեցնում է իրենց սերը:Արքան փորձում է արդարանալ՝ ասելով. «Չեմ հասկանում ես քեզ, ես կանանոց ունեմ, հարճեր ունեմ , և դու չխանդեցիր երբեք, արդ ինչու՞ ես խանդում»[22]: «Քո աչքերում, արքա՛, ես սեր տեսա երեկ, վայրի ու խենթ մի սեր…»[23], - շարունակում է թագուհին:

Մանդուն գրավում է արքայի սիրտն այն աստիճան, որ նա անկեղծանում է նրա մոտ և ասում, որ կգերադասեր կյանքում լինել մի պարզ գուսան, քան թե արքա: Այսպես արքայի կերպարը շարունակում է մանրանալ, նա թույլ է տալիս, որ Մանդուն ընդդիմանա ու վիրավորի Սաթենիկին: Արտավազդը կախարդ Մարեին ուղարկում է Արգավանի մոտ, որպեսզի սա խանդի սև բոցը բորբոքի նրա հոգում՝ անվերջ

---

[20] Դավթյան Վ., Անքնություն , «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան ,1987,էջ 266:
[21] Նույն տեղում, էջ 267:
[22] Նույն տեղում, էջ 281:
[23] Նույն տեղում, էջ 281:

շշնջալով՝ «Թե ինչպե՞ս է Մանդուն Արտաշեսին սիրում»: Գալով արքայի մոտ՝ Արգավանը ցանկանում է առանձին զրուցել նրա հետ: Նա պատրաստ է ետ տալ բոլոր շնորհները, միայն թե ետ ստանա Մանդուին, սակայն անօգուտ: Այդ ընթացքում սելևկիացիները ներխուժում են Հայաստան: Երկիրը հայտնվում է ծանր դրության մեջ: Մանդուն նժույգով արշավում է դեպի Արգավանի բերդը: Արտավազդը նույն պահին անիծում է Մանդուին, սակայն հայրը զգուշացնում է, որ անեծքները հակադարձ ուժ ունեն:

Արտաշեսը գրոհում է Անտիոքի վրա: Արգավանը Մանդուի հետ արշավում է, բայց արդեն ոչ թե իր արքայից վրեժ լուծելու, այլ օրհնվելու համար: Սակայն Սաթենիկը թունավորում է Մանդուին, իսկ Արգավանին սպանում են Արտավազդի քաջքերը: Արտաշեսի կարգադրությամբ Սաթենիկը ձերբակալվում է, իսկ Արտավազդի համար դարբինները շղթաներ են կռում և նրան փակում Մասյաց անձավներում: Մանդուն խորապես ողբերգական կերպար է, և նրա ողբերգության միակ պատճառը պատմիչի վկայած նրա սքանչելի գեղեցկությունն է: Բայց նրա կերպարն ուղղագիծ չէ: Հետաքրքրական հոգեբանություն է տվել իր հերոսուհուն Վ.Դավթյանը. նա և՛ դժբախտ է, որ կայուն ճակատագիր չի ունեցել ու եղել է տարբեր մարդկանց հարճը, և՛ երջանիկ է, որ սիրվել է այդքան: Այդ է պատճառը, որ նա մեռնելիս ափսոսանք չի ապրում իր սիրո համար, ափսոսում է միայն իր հայրենի երկիրը չվերադառնալու, չտեսնելու համար: «Մանդու» պոեմի արժեքը սոսկ առասպելների առեղծվածների վերծանումը չէ, այլ նաև այնտեղ ծավալվող դեպքերի արդիական հնչեղությունը: Ի հակադրություն այն դիտարկումների, թե ապականվել են մարդկային բարքերը՝ Վ. Դավթյանը փորձում է հաստատել բարոյական այն իդեալը, թե «Կարոտն ու սերն են սուրբ ակունքը արդարության և և ամենայն վսեմ ու սխրալի գործի…»: Պոեմի մեջ վիճելի է աստվածների դերի խնդիրը: Այստեղ նրանք դուրս են հերոսների մտածողությունից, քանի որ հերոսներն իրենց հույսը երբեք նրանց վրա չեն դնում, չեն դիմում նրանց օգնությանն ու միջնորդությանը, ինչպես հունական դիցաբանության մեջ: Այդ պատճառով էլ պոեմի երկնային ու երկրային դրվագները գոյություն ունեն իրարից անկախ: Արտավազդը չար ուժերի խտացումն է, որն սկզբից ևեթ դատապարտվել է հայոց վիպասքի մեջ: Նրան հակառակ Արտաշեսն անընդհատ շեշտում է բարի ուժի աշխարհաշեն էությունը և հանդես գալիս որպես բարի ուժի նույնքան պարզունակ կրող: Արտաշեսի մահվան տեսարանը չկա, որ

Արտավազդը նրա գերեզմանի շուրջ իր խոսքն ասի. «Մինչ դու գնացիր և աշխարհն արար քեզ հետ տարար, Ես այս ավերակաց ինչպե՞ս թագավորեմ»: Դրա փոխարեն կա Արտաշեսի մտահոգությունը երկրի համար, որը նրան տեսլանում է որպես լեռնակղզի: Եվ որպես ժողովրդի գոյատևման միջոց՝ հայոց արքան և հայոց աստվածները հաստատում են բարին, ապա նաև աշխատանքը, երգն ու արարչությունը:

Ժողովրդի պատմության դրվագները, նրա հերոսական ու ողբերգական պատմությունը հնարավորություն են տալիս բանաստեղծին ընդհանրացումներ անելու ժողովրդի հավաքական բնավորության, նրա հոգեբանության, ճակատագրի, պատմության ու գոյի փիլիսոփայության վերաբերյալ: Ո՞րն է հարատևման գաղտնիքը և ո՞րն է գոյի հենակետը, ի՞նչն է ժողովրդի խառնվածքի մեջ թերի և արդյո՞ք թերի է և ի՞նչ է պակասում ժողովրդին այս արևի տակ իր կյանքն ապրելու, արդյո՞ք ճիշտ է անցել ժողովուրդն իր պատմական ուղին և ինչպե՞ս պետք է անցնի այսուհետև, անհրաժե՞շտ է արդյոք դաժան գոյապայքարում ունենալ գութ, լինել լույսի ճամփորդ ու գեղեցիկի գերի, թե՞ պետք է բիրտ ու կոպիտ լինել, սակայն զորեղ, ամենակարող: Այս խնդիրները Վ.Դավթյանին հուզում են ոչ միայն պատմության թեմայով գրված երկերում, այլև այսօրվա խոհերում, մտորումներում, դառնում են մտասևեռում: Բանաստեղծը քննում է տարբեր ուղիների հնարավորությունը, հաշվում զոհերը, կորուստները, ինքն իր հետ վիճում, քննում, ընտրում …

Այս իմաստով բնորոշ է «Գիշերային զրույց Նարեկացու հետ» պոեմը: Նարեկացու հետ Վ.Դավթյանն ունի երկու զրույց, առաջինի մեջ նա զրույց է բացում արվեստի, բանաստեղծական ձիրքի մասին, երկրորդի մեջ՝ ժողովրդի ճակատագրի, նրան հասած արհավիրքների մասին: Անշուշտ, պատահական չէ Վ.Դավթյանի զրույցն իր հանճարեղ նախորդի հետ: Չէ՞ որ ժողովրդի ճակատագիրը հյուսվել է դարերի ու հազարամյակների ընթացքում, և դարավոր ճանապարհ անցած ժողովուրդը ողբի երգերի կողքին հյուսել է չքնաղ տաղեր սիրո, խաղողի, արևի, ծննդյան ու ուրախության մասին, տաղեր է հյուսել ու լույսին ձգտել, տաճար է սարքել ու աղոթքով մաքրել հոգին, տաճար է սարքել ու ինքնուրույնություն հաստատել: Եվ այդ ընթացքում հյուսվել են լույս ճառագող մարգարտաշար տաղեր: Ինչու՞ հայ բանաստեղծները չեն հյուսել ընդվզումի, պայքարի , ռազմի, մարտակոչի տաղեր, ինչու՞ է Նարեկացին մեզ տարել լույսի ճամփով, երբ ապրելն այնքան դժվար էր

աշխարհում և լույսի զորությունն՝ այնքան խախուտ: Եվ այսօրվա բանաստեղծը փորձում է հուզող հարցերի պատասխանը գտնել հանճարեղ նախորդների իմաստության օգնությամբ, նրանց արվեստից առած դասերով. չէ՞ որ մեծերը ժողովրդի փորձն ու իմաստությունն են ամփոփում իրենց մեջ: Կեսգիշերային լռության ու անքնության պահին Նարեկացու հետ մտովի զրույցն սկսվում է կարծես կիսատ մնացած եղեռնի թեմայից, զրկված հողի համար մորմոքից, քանի որ եթե հայը զրկված չլիներ իր հայրենիքից, ապա մեծ Նարեկացու շիրմի վրա բանաստեղծության տոն կլիներ, և նրա շիրիմը՝ ուխտատեղի, ապա եղծված չէին լինի հայոց հուշարձաններն ու վիրավոր՝ հայոց ոգին: Էլ ինչպե՞ս չմորմոքա հայոց բանաստեղծը, երբ չի կարող իր հարգանքի տուրքը մատուցել մեծ նախորդի հիշատակին և իր հողմավար դարի տագնապներից մի պահ թեթևանալ չի կարող մեծ ճգնավորի շիրիմի վրա: Ահա զրկվածության, անկարողության ու կողոպտվածության ցավն է ստիպում՝ հարց տալու մեծ նախորդին, ասելու նրան, որ ինքը ոխ ունի նրա դեմ, որովհետև նա է մեր ժողովրդի մեջ դրել խիղճն ու գութը:

Նարեկացու հետ զրույցի ձևը գեղարվեստական միջոց է բանաստեղծ Դավթյանի համար՝ ժողովրդի բնավորության ձևավորման ազդակները քննելու: Նրա կարծիքով, այդ բնավորության ձևավորմանը մեծապես նպաստել են արվեստը, գրականությունը, արվեստի ճանապարհով պրոպագանդվող գաղափարա-խոսությունը, ճշմարտության, բարության, գեղեցկության ու առաքինության քարոզը:

Այս էլ որերորդ անգամ հայ մտավորականի առջև ծառանում է ժողովրդի վարքագծի, նրա պատմական գոյատևման սկզբունքի ճակատագրական հարցը: Բայց «Գիշերային զրույց Նարեկացու հետ» պոեմում առաջանում է մի երկրորդ խնդիր ևս. ի՞նչ դեր է կատարել ընդհանրապես գաղափարախոսությունը և հատկապես գրականությունը հայ ժողովրդի քաղաքական վարքագծի և բարոյական ու հոգեբանական դիմագծի ձևավորման գործում: Նման հարցադրում կար Ե.Չարենցի պոեզիայում: Ե.Չարենցի համոզմամբ յուրաքանչյուր ժողովրդի մշակույթ ոչ միայն նրա ապրած պատմական ու քաղաքական կյանքի հետևանք է, այլև ինքն է ձևավորում ազգի դեմքը, ազգային բնավորությունն ու հոգեբանությունը:

Գուսանները, երգիչներն ու բանաստեղծները ժողովրդին գցեցին թյուրիմացության մեջ՝ հզորության պատրանք ստեղծելով նրա մոտ, և երբ այդ պատրանքը դեմ առավ դաժան իրականությանը՝

Մեր կյանքի հիմերը անդունդը ընկան
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ…[24]

Մյուս կողմից էլ Ե. Չարենցն ընդվզում է հեզության ու ոգու խեղճություն քարոզող միջնադարյան դպիրների դեմ:

Ես չեմ գովերգում հանճարը ձեր,
Օ, ժանտաբարո դպիրներ ծե՛ր,
Որ մառ բարբառով դպրության մութ
Կոփել եք ստրուկ մի ժողովուրդ…[25]

Եթե ընդունենք, որ Ե.Չարենցի վերաբերմունքն անարդարացի է դպիրների նկատմամբ, միևնույնն է՝ սկզբունքորեն արդարացի է նրա բողոքը ոգու ճորտություն քարոզող գրականության դեմ: Ահա այս նույն խնդիրն է, որ նորովի ծառանում է բանաստեղծ Վահագն Դավթյանի առջև: Գ.Նարեկացու ստեղծագործության ոգու, նրա քարոզած առաքինության, մաքրության, կատարելության ու սրբության մասին է Դավթյանի բանավեճը: Նարեկացին՝ իր ժողովրդի մեծ զավակն, իր հերթին ազդել է ժողովրդի բնավորության հետագա ձևավորման վրա: Ինչպե՞ս և ինչո՞վ : Նարեկացին է սովորեցրել խղճալ ու գթալ, երբ դարն ու ժամանակն այլ բան էին պահանջում, երբ ապրելու համար հարկավոր էր սրել ժանիքները և զինվել նույն զենքով, ինչով զինված էր թշնամին: Այսպես, զրույցի ծավալմանը զուգընթաց զարգանում են կեցության և բարոյական սկզբունքների երկու տարբերակները: Առաջին տարբերակն այն է, ինչը մենք ունենք և ինչն ավանդել է Նարեկացին՝ խիղճ, գթասիրություն, առաքինություն: Երկրորդ տարբերակը՝ անգթությունը, վայրենությունը գազանությունը բնորոշ չեն մեր ժողովրդին, բայց կենսունակ են պահում մեր թշնամիներին:

[24] Նույն տեղում, էջ 34:
[25] Նույն տեղում, էջ 320:

Շարունակվող հակադրության մեջ աստիճանաբար հասունանում է բանաստեղծ Վ. Դավթյանի կողմնորոշումը, տարբերակներից մեկի նախապատվությունը: Այն պահին, երբ Վ.Դավթյանի քնարական հերոսին պաշարում են դառն ու ըմբոստ խոհերը, ազգային էության ու խառնվածքի մասին կասկածները, ազգային վարքագծի դատապարտումը, դրան հետևում է մեղան՝ «Խափանիր, քավի՛չ, խոսքն իմ սևասուն, Լուսե հեղեղիդ ահեղ շառաչով»[26] կամ՝ «Բայց մեղա՛,մեղա՛, Ներիր քուշանիս ու հոնիս կոպիտ… Ներիր կամ շանթիր ինձ որպես Հոբի»[27]: Սակայն պոեմի քնարական հերոսի երկվությունը, ըմբոստացման ալիքն ու Նարեկացու մեծարման իրար հերթագայող տողերը արդյունք են ոչ միայն այսօրվա բանաստեղծի էությունը բզկտող հակասությունների, այլև բացահայտում են Նարեկացու էության ու աշխարհայացքի դավթյանական ըմբռնումը:

Ժ. Քալանթարյանը հավելում է, թե զրույցի բանաստեղծական ձևը , որ ժանրային արժեք է ստանում Վ.Դավթյանի պոեզիայում, լայն հնարավորություններ է տալիս հեղինակին: Զրույցը հնարավոր է դարձնում կերպավորելու զրուցակից երկու կողմերին: Հատկապես Նարեկացուն բնութագրելու համար դա անհամեմատ շատ ավելի լայն միջոց է, քան ձոնն ու ներբողը, որովհետև մտովի երկխոսության հնարավորություն է ստեղծում: Նման դեպքերում Վ.Դավթյանի զրուցակից բանաստեղծի խոսքը նրա ստեղծագործությունն է: Նարեկացուն դիմելու կոչականները՝ բուժիչ բարբառ, լույս անպարագիծ, ճգնակյաց, աստծո ախոյան ու զրուցակից, բարեգութ, ահեղ և այլն, մասամբ Նարեկացու բառարանից վերցրած բառեր են, որոնցով նա դիմում է աստծուն, իսկ այսօրվա բանաստեղծը դիմում է նրան՝ իբրև վավերական սրբի: Սակայն այդ բառերը սոսկ գեղեցիկ մակդիրներ չեն, որոնք ճոխացնում են խոսքը, դրանք բնութագրում են Նարեկացուն՝ ելնելով նրա իսկ ստեղծագործությունից և մեր դարի բանաստեղծին հուզող հարցերի հետ Նարեկացու ունեցած առնչությունից[28]:

---

[26] Նույն տեղում, էջ 397:
[27] Նույն տեղում, էջ 399:
[28] Քալանթարյան Ժ., Վահագն Դավթյան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Ե., 1991, էջ 89-90:

20-րդ դարում ծավալվող դեպքերի ազդեցության տակ Վ.Դավթյանը կրկին քննության է առնում գրականության ու գրողի դերի հարցը: Կենսապայքարի փոթորկահույզ ծովում կրկին ու կրկին ծնվում է գոյության ավելի արմատական ուղիների փնտրտուքի հարցը, որից անմասն չի կարող մնալ գրականությունը: Ահա Վ.Դավթյանը մի անգամ ևս ստուգում է գրականության առաքելության՝ բարու և գեղեցիկի սերմանողի նրա դերը և այդ հարցը քննության է առնում Նարեկացու կերպարի և նրա ստեղծագործության էության քննության միջոցով: Բայց, վերջին հաշվով, Նարեկացին պայմանական կերպար է, նա երևում է իրեն տրված անվանումների և այդ անվանումներին համապատասխան կարճ բնութագրությունների մեջ: Ավելի շատ պոեմը քնարական մենախոսություն է կամ զրույց է ինքն իր հետ, իր երկատված էության հետ, երբ իրար դեմ են ելնում բանաստեղծի երկու ես-երը՝ մեկը կասկածող, դատապարտող, ընդվզող, կեցության ու վարքագծի այլ եղանակ առաջարկող, մյուսը՝ հավատարիմ մեր ժողովրդի թողած ավանդներին, նրա խաղաղասիրական ազնիվ էությանը, դեպի գիտության լույսը ձգտող, ինքնությունն արվեստի մեջ հաստատող բնավորությանը: Բանաստեղծի երկատված ես-ի առաջին կեսը սխալ է համարում մեր անցած ճանապարհը՝ ու՞մ էր հարկավոր այդ, երբ աշխարհում հաղթում է նա, ով երկաթից ոչ թե խոփ է ձուլում, այլ սուր, մկունդ ու նետ, ու՞մ էր պետք մաճը, հարկավոր էր յաթաղան բռնել ձեռքին՝ գոյության դաժան պայքարում հաղթելու համար: Ու նորից զարթնում է կորած հողի հուշը, անմեղ նահատակների չմարող ցավը: Նշված ուղիների մեջ բանաստեղծը կատարում է իր ընտրությունը, բայց միաժամանակ ընթերցողներին կարծես հուշում է այլ ուղիների գոյության մասին: Վ.Դավթյանը կրկին հանգում է բանաստեղծի՝ ի վերուստ հաստատված առաքելությանը, բարության ու գեղեցկության սերմանողի նրա դերին: Նրա երկատված էության երկրորդ ես-ը ամեն անգամ ցրում է սև կասկածները մտքի պայծառ լույսով.

Ներիր , բարեգու՛թ,
Փարատիր մաղձի մոլուցքն այս դեղին
Եվ կասկածանքիս ամպերը ցրիր…[29]:

---

[29] Դավթյան Վ., Երկեր, հատոր 2-րդ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985,էջ 401:

Հույսի ու հուսահատության, վշտի ու մխիթարության, ըմբոստացման ու հեզության, լույսի ու խավարի փոփոխական ելևէջները հաջորդում են իրար, ստեղծում դրամատիկ լարվածություն, փոթորկվող մտքի ու հույզի մի ծավալուն պատկեր, որի մեջ հայտնված հերոսը նման է ինքն իր ստվերի դեմ անվերջ կռվող մարդու: Այս կասկածը բնական է ու անբաժան մարդուց, ինչպես անբաժան է նրա ստվերը, ու մի պահ թվում է, թե պոեմի հերոսն, իրոք, գիշերը ուժասպառության աստիճան հոգեկան պայքար է մղել և ծանր կասկածների միջով ի վերջո հանգել է բանականության ու լույսի հաղթանակին: Այլ կերպ կարծես չէր էլ կարող լինել, վերջին հաշվով բանաստեղծը ժառանգորդն է այն ամենի, ինչ ավանդել է իր ժողովուրդը, իր ժողովրդի մեծերը և առաջին հերթին՝ Նարեկացին.

Դարբի՛ն կորովի,
Դու լույսի անխոց զրահ ես կռել,
Որ հագնենք ընդդեմ խավարի, չարի,
Դատավո՛ր արդար,
Մեր հավերժության վճիռն ես գրել,
Կնքել կնիքով քո սուրբ հանճարի[30]:

Հայ ժողովուրդն է ծնել Նարեկացուն, և Նարեկացին իր ժողովրդին է տվել մտքի անսպառ լույսը, և այսօր ահեղ դարի խրթին ճամփեքով մեր ժողովուրդը պետք է տանի բանականության , ողջամտության, գութի, խղճի լույսը, Նարեկացու կերպարով ու նրա միջոցով պետք է մի քիչ մաքրություն խառնի աշխարհի պղտոր ծովերին:

Պոեմն ավարտվում է խղճի, մաքրության ու առաքինության ավանդների շարունակությունով, ասել է, թե ժողովրդի դարավոր բնավորության ու վարքագծի և, որ ոչ պակաս կարևոր է, արվեստի ու գրականության մարդասիրական էության հաստատման գաղափարով: Բանաստեղծը վարպետորեն իրար մեջ ներհյուսել է անցյալն ու ներկան, պատմության դասերն այսօրվա խնդիրների հետ: Պոեմի կառուցվածքը նպատակասլաց է, բառապաշարը՝ թելադրված զրուցակցի

[30] Նույն տեղում, էջ 405:

ժամանակով ու ոճով, վերջաբանի անցումը՝ փոքր-ինչ միանգամից, կարծես առանց նախապատրաստության:

Պատմության նկատմամբ Վ.Դավթյանի փիլիսոփայական մեկնակետն զգալիորեն երևան է գալիս «Արարչություն» («Գիրք ծննդոց»-1970թ.) պոեմում: Իր երկերի ժողովածուներում և ընտիր երկերի արժեք ունեցող «Ասք սիրո» (1982) գրքում բանաստեղծը պատմությանը նվիրված բաժինները բացում է «Արարչություն» պոեմով: Սկզբնապես դա շարք-պոեմ էր, բաղկացած առանձին բանաստեղծություններից, որոնք կոչվում էին «Օր առաջին», «Օր երկրորդ», … «Օր յոթերորդ», հետագայում վերնագրերը վերացան, և ստեղծագործությունն ավելի միասնացավ ու ձեռք բերեց իրական պոեմի արժեք:

Պատմության թեմայով իր պոեմներն ու ասքերը Վ.Դավթյանը գրել է տարբեր տարիների, բայց ամեն անգամ ժողովածու կազմելիս նա վերադասավորել է այդ ստեղծագործությունները մի ներքին ժամանակագրությամբ, և շարքի սկզբում տեղադրված «Արարչություն» պոեմը պատմության դավթյանական ընկալումը հասցնում է աստվածաշնչյան ակունքներին: «Արարչություն» պոեմը, որ յուրովի հակաճառություն է աստվածաշնչյան լեգենդին, պատմական չէ վավերականության իմաստով, բայց պոեմը ոգու ծավալման և մարդու մարդացման պատմությունն է: Հովհ. Շիրազն իր «Բիբլիական» պոեմում աշխարհաստեղծ և ամենակարող ուժը վերագրում էր մարդուն ու աստվածացնում նրան՝ տեղափոխելով մարդու և աստծո տեղերը: Սակայն, Հովհ. Շիրազի մոտ մարդն, այնուամենայնիվ, գործում է աստծուց իրեն շնորհված դերի շրջանակներում (աստված ցավը տվեց մարդուն և մղեց նրան աստվածանալու) և անցնում է մարդուց մինչև աստված ընկած, այսինքն՝ անվերջ կատարելագործման ու հզորացման ճանապարհը:

Վ.Դավթյանը հենց սկզբից է սկսում իր վեճը արարչագործության աստվածաշնչյան տարբերակի դեմ.

Եվ դրախտ չեղավ աշխարհի վրա:
Ցուրտ հողմեր եղան,
Ու թախիծ եղավ քարանձավային[31]:

---

[31] Դավթյան Վ., Երկեր, հատոր 1-ին, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 397::

Պոեմում Վ.Դավթյանը հասնում է փիլիսոփայական խոր ընդհանրացման. մարդը կարծես գործում է փակ շղթայում՝ երազ, սեր, երգ, կրակ, գինի, հավատ և ապա՝ նորից նույնը: Հասնելով հավատի բարձրությանը՝ Աստծուն, և կորցնելով նրան,մարդը նորից է ձգտում հավատին՝ սկսելով երազից: Այս կախարդական շրջանով էլ հոլովվում է հավիտենությունը.

Երեկո եղավ,
Եղավ վաղորդայն,
Եվ եղավ հոգնած հավիտենություն . . .[32]:

Ի տարբերություն աստվածաշնչյան լեգենդի, որտեղ մարդկային կյանքը շարունակվում է հաջորդական ծնունդների ճանապարհով (Ադամը ծնեց Կայենին, Աբելին, Սեթին … Կայենը ծնեց Ենոքին … Սեթը ծնեց Ենովսին …)՝ Վ.Դավթյանը մարդու պատմությունը դիտում է նրա հոգևոր որոնումների և ոգու կատարելագործման տեսանկյունից:

[32] Նույն տեղում, էջ 406:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով թեման՝ կարող ենք արդյունքներն ամփոփել հետևյալ եզրակացություններում.

- 1950-ական թվականների վերջին Վ.Դավթյանի պոեզիայում խորանում է պատմական երակը, որն ընդգրկում է ինչպես հայ ժողովրդի նորագույն պատմության եղերական դրվագները, այնպես էլ, առավել խորությամբ միջնադարյան Հայաստանի կյանքի աշխարհիկ, հերոսական և ողբերգական իրողությունները:
- 1960-ական թթ. սկսած՝ Վ.Դավթյանը հանդես եկավ ժողովրդի պատմական ճակատագրի հարցերին նվիրված լայն ընդգրկում ունեցող երկերով: Պատմությունը Վ.Դավթյանի գեղագիտական համակարգում առանձնահատուկ տեղ գրավեց: Նա փորձեց ճանաչել և գեղարվեստորեն ներկայացնել պատմության խորհուրդը: Գրեց Մաշտոցի ու Կոմիտասի մասին, խորասուզվեց ժամանակների շրջապտույտի մեջ և ոգեկոչեց պատմության շրջադարձային պահերը մեկնող դրվագներ ու եղելություններ:
- Վ. Դավթյանը զանազանում էր պատմական փաստ, պատմական ճշմարտություն և պատմության ոգի հասկացությունները: Ըստ նրա գնահատելի տարբերակն այն էր, երբ փաստը համընկնում էր պատմական ճշմարտությանն ու ոգուն, հակառակ դեպքում կույր հնազանդությունը կարող էր վնասել ստեղծագործական ազատությանը:
- Վ. Դավթյանի պոեմներում պատմականն ու ասքայինը դրսևորվեցին միաձույլ կերպով: Ասքերը պոեմներ են: Ասք բառաձևի կիրառումն այս դեպքում թեև ընդհանուր առմամբ տեսակի նորություն չի բերում, բայց պոեմի ներսում ստեղծում է պատումային իր ուրույն սկզբունքները:
- Ժամանակակից գրողները փորձում են պատմությունը հանել հերոսական կաղապարներից և դնել սովորական հունի մեջ, տեսնել այնտեղ կյանքի ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական, բարոյական ու հոգեբանական կողմերը: Փաստորեն Վահագն Դավթյանը հենց այդտեղից էլ սկսեց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Ուսումնասիրություններ, մենագրություններ, գրական երկեր

1. Աղաբաբյան Ս., 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, 2 գրքով,գիրք II, «Սովետական գրող» հրատարակչություն,Երևան, 1984, 524 էջ:
2. Աղաբաբյան Ս., Ծուխ ծխանի, Սովետահայ գրականություն, Երևան, 1970, №3, էջ 134:
3. Անցողիկն ու հավիտենականը, Վահագն Դավթյանի հիշատակին, ԴԱԼԼ հրատարակչություն, Երևան, 2005, 528 էջ:
4. Բանաստեղծությունը և արդիականությունը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, 392 էջ:
5. Գալստյան Հ., Վահագն Դավթյանի պոեզիան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 160 էջ:
6. Գասպարյան Դ., Վահագն Դավթյան, «Կրթության ազգային ինստիտուտ» հրատարակչություն, Երևան, 2007, 376 էջ:
7. Դավթյան Վ., Երկերի ժողովածու, հատոր 1-ին, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, 448 էջ:
8. Դավթյան Վ., Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, 424 էջ:
9. Դավթյան Վ., Անխորագիր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 2003, 164 էջ:
10. Դավթյան Վ., Անքնություն , «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան ,1987, 352 էջ:
11. Դավթյան Վ., Ի սկզբանե էր բանն. հոդվածներ և էսսեներ, «Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան, 1989, 608 էջ:
12. Զաքարյան Ա., 20-րդ դարի սկզբի հայոց բանաստեղծությունը, 2 գրքով, գիրք I , Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973, 450 էջ:
13. Կապուտիկյան Ս., Երկեր, հատոր 1-ին, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984, 544 էջ:

14. Հայրապետյան Լ., Վահագն Դավթյանի խոսքարվեստը, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1999, 148 էջ։

15. Շիրազ Հ., Ընտիր երկեր, 5 հատորով, հատոր 1-ին, <<Շուշան>> հրատարակչություն, Երևան, 1992, 296 էջ։

16. Չարենց Ե., Պոեմներ, բանաստեղծություններ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1984, 752 էջ։

17. Սևակ Պ., Երկերի ժողովածու, հատոր 1-ին, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1972, 528 էջ։

18. Քալանթարյան Ժ., Վահագն Դավթյան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1991, 164 էջ։

Բ. Պարբերականներ

1. Ծուխ ծխանի, Սովետահայ գրականություն, Երևան, 1970, №3, 250էջ: